

Գ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՆԱՅԻՆ ՃՆՃՂՈՒԿՆԵՐԻ ԲԻՈԼՈԳԻԱՆ

Կովկասյան տնային ճնճղուկների (*Passer domesticus caucasicus* Bogd.) ուսումնասիրությանը զբաղվել ենք 1948 թվականից:

Բիոլոգների մեջ կային և այժմ էլ կան տարակարծություններ ինչպես տնային ճնճղուկի բիոլոգիայի՝ հատկապես բազմացման բիոլոգիայի (Ա. Ա. Կելեյնիկով [5], Ա. Ի. Իլենկո [4], Լ. Ա. Պորտենկո [8], Գ. Պ. Դեմենտև [3] և ուրիշ.), այնպես էլ նրա տնտեսական նշանակության վերաբերյալ:

Հայկական ՍՍՌ-ում, ինչպես և ամենուր, կովկասյան տնային ճնճղուկները կապված են մարդկանց բնակավայրերի հետ, սակայն բարձրագույն տե-

Աղյուսակ 1

Կովկասյան տնային ճնճղուկների բների 1955—1956 թ.թ.

հունիսին կատարած հաշվառման տվյալները

Բ ն ա կ ա վ ա յ ր	Բ ն եր ի ք ա ն ա կ ր		
	1-ին տասնոր- յակ	2-րդ տասնոր- յակ	3-րդ տասնոր- յակ
Էջմիածնի շրջ. Վերին Պաթունարխ գյուղ	121	—	—
Էջմիածնի շրջ. Արշալույս գյուղ	135	—	—
Շահումյանի շրջ. Թաղապետ գյուղ	172	—	—
Աշտարակի շրջ. Բյուրական գյուղ	—	105	—
« « Ինակլու գյուղ	—	64	—
Իջևանի շրջ. Սևաբ գյուղ	—	112	—
Աղիզբեկովի շրջ. Հերհեր գյուղ	—	115	—
Գորիս	—	120	—
Սևանի շրջ. Լճափ գյուղ	—	—	95
Կամոյի շրջ. Կարմիր գյուղ	—	—	87

ղերում նրանք քանակապես ավելի քիչ են լինում, քան ցածրագույն վայրերում (Գ. Գ. Մանուչարյան [6], Ս. Կ. Դալ [1, 2]): 1955, 1956, 1957 և 1962 թթ. մենք կատարել ենք նրանց բների հաշվառում\*:

Բացի վերոհիշյալից, Արարատյան հարթավայրի գյուղերի շրջակայքի այգիներում գտնվող ծառերի վրա ևս հանդիպում են բավական քանակությամբ տնային ճնճղուկների բներ. Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղից դեպի Այդրը լիճ տանող ճանապարհի եզրերին գտնվող գրեթե բոլոր բարդիների վրա հայտնաբերված են 3—12 բույն, ընդամենը 325 բույն (մոտավորապես 350 գծային ու տարածության վրա):

\* Բների հաշվառումը կատարվել է գյուղերի տարբեր մասերում՝ 10 տան պատերի ճեղքերում:

Տնային ճնճղուկները բներ են հյուսում նաև այգիներում գտնվող տանձև-նիների ու ծիրանիների վրա, մինչդեռ լեռնային շրջաններում նման երևույթ չի նկատվում: Բացի որոշակի տեղերում բների հաշվառումից, նույն թվականների մարտ և նոյեմբեր ամիսների առաջին տասնօրյակում կատարել ենք նաև նրանց քանակական հաշվառում 1000 գծային մ տարածության վրա: Հաշվառումը կատարվել է արևածագին և մայրամուտից 1—2 ժամ առաջ, այսինքն այն ժամանակ, երբ տնային ճնճղուկները առավել ակտիվ են, այնուհետև դուրս է բերվել միջին թվաքանականը:

Աղյուսակ 2

Կովկասյան տնային ճնճղուկների 1955 թ. կատարված գծային հաշվառման տվյալները (1 կիլոմետրի վրա)

Տեղանքի անունը	Քանակը	
	մարտին	նոյեմբերին
Վերին Խաթունարիս գյուղի հարավ-արևմտյան մասում, այգիների մոտ	325	1252
Արշալույս գյուղի հարավ-արևմտյան մասում, ճանապարհի երկարությամբ	312	1350
Հոկտեմբերյան շրջանի 3—սովխոդից դեպի բանավան տանող ճանապարհը	463	1955
Շահումյանի շրջ. Թագադյուղի արևմտյան մասում այգիների միջով ձգվող ճանապարհ	620	2450
Աշտարակի շրջ. Օշական գյուղ, դեպի Խերես գինու գործարան	284	1220
Բյուրականի կենտրոնից դեպի աստղադիտարան	195	950
Աշտարակի շրջ. Ինակլու գյուղից դեպի Բյուրական	75	458

Նման հաշվառումներ կատարվել են նաև 1956, 1957, 1962 թթ.: Աղյուսակ 3-ում բերվում են միայն 1961 թ. աշնանային և 1962 թ. գարնանային հաշվառման արդյունքները: Աղյուսակից երևում է, որ ճնճղուկները քանակական զգալի աճ են ունեցել:

Արարատյան հարթավայրում տնային ճնճղուկները հանդես են գալիս առավել մեծ քանակությամբ և մյուս թռչունների նկատմամբ ֆոնային բնույթ են կրում:

Պարզ է, որ այսպիսի մեծ քանակություն կազմող թռչունների ուսումնասիրությունը չպետք է դուրս մնա ինչպես կենդանաբանության, գյուղատնտեսության, այնպես էլ առողջապահության բնագավառի աշխատողների տեսադաշտից:

Տնային ճնճղուկները բավական զգայուն են եղանակի նկատմամբ և արագ արձագանքում են նրա փոփոխություններին: Նույնիսկ ձմռանը՝ հունվարի, փետրվարի արևոտ օրերին նրանք հաճախ այնպիսի վարք են ցուցաբերում, որ թվում է, թե զույգավորվում են, սակայն դա խաբուսիկ է:

Տնային ճնճղուկների 1948—62 թթ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զույգավորման առաջին անհատները նկատվել են մարտի առաջին, նույնիսկ փետրվարի 3-րդ տասնօրյակներում, մասսայական զույգավորումը նկատվել է մարտի երկրորդ կեսին, այդ ժամանակվանից էլ սկսվում են բների հյուսումը: Ինչպես զույգավորման, այնպես էլ բնագրման տեղի համար արու-

ները հաճախ միմյանց հետ կուլում են, դա նկատվում է նաև աշնան ու ձմռան արևոտ օրերին:

Պարզելու համար, թե տնային ճնճղուկները երբ են ընդունակ բազմանալու, 1959 և 1960 թթ. ամեն շաբաթ (ամբողջ տարին) կատարել ենք 10 ճնճղուկների սերմնարանների ու ֆոլիկուլների շափում: Պարզվել է, որ սերմնարանները առավելագույն հասունացման (10—11 մմ երկարության) են հասնում մարտի 15—20-ը, այդ նույն ժամանակ էգերի մոտ ֆոլիկուլները հասնում են 9—10,5 մմ-ի և այդպիսիք ի վիճակի են ձվադրելու:

Աղյուսակ 3

Կովկասյան տնային ճնճղուկների 1961—62 թթ. կատարված հաշվառման արդյունքները (1 զծային կմ-ի վրա)

Տեղանքի անունը	Քանակը	
	մարտի	սեպտեմբերի
Վերին Պաթունարխ գյուղ	372	1774
Արշալույս գյուղ	385	1850
Հոկտեմբերյանի շրջ. 3-րդ սովխոզ	546	2315
Շահումյան շրջ. Թագազյուղ	675	2685
Արտաշատի շրջ. Կիրովի անվան սովխոզ	362	1605
Աշտարակի շրջ. Օշական գյուղ	378	1565
Աշտարակի շրջ. Բյուրական գյուղ	252	1168
Աշտարակի շրջ. Ինակու գյուղ	125	492

Սերմնարանների այդ վիճակը Արարատյան հարթավայրում տևում է մինչև հուլիսի կեսերը, մասամբ մինչև օգոստոսի 2-րդ տասնօրյակը, այնուհետև սկզբում դանդաղ, ապա արագորեն նվազում են սերմնարանների շափերը և նվազագույն մեծության են հասնում նոյեմբերի երկրորդ կեսից մինչև հունվարի վերջը: Այս ժամանակամիջոցը կախված է եղանակից և կարող է մի քանի օրով ուշանալ կամ ընդհակառակը: Դիտողություններից պարզվել է, որ Արարատյան հարթավայրում տնային ճնճղուկները մասսայաբար բազմանում են տարեկան երկու անգամ:

Առաջին մասսայական ձվադրումը Արարատյան հարթավայրում կատարվում է մարտի երկրորդ կեսից մինչև ապրիլի կեսերը, որը դիտվել է 1948—62 թթ., իսկ առաջին սերնդի մասսայական թռիչքը կատարվում է ապրիլի վերջերին և մայիսի առաջին օրերին:

Արարատյան հարթավայրում ձագերի երկրորդ մասսայական թռիչքը տեղի է ունենում հունիսի երրորդ տասնօրյակում և հուլիսի սկզբին:

Դիտողություններից պարզվել է, որ հասակավոր տնային ճնճղուկները բազմանում են ավելի շուտ և ավելի շատ ձու են դնում, քան առաջին անգամ ձվադրողները, այսինքն անցած տարվա ձագերը: Նախորդ տարվա երկրորդ սերնդի ձագերը ձվադրում են ավելի ուշ, իսկ այն հասակավոր ճնճղուկները, որոնք առաջին սերունդը տվել են վաղ գարնանը, այսինքն՝ մարտի առաջին տասնօրյակին, պատահում է, որ տալիս են երրորդ սերունդը:

Կովկասյան տնային ճնճղուկների բազմացման բիոլոգիան ուսումնասի-

րելու նպատակով 1948—62 թթ. Հայկական ՍՍՌ-ի տարբեր շրջաններում, իսկ հիմնականում Արարատյան հարթավայրում, ունեցել ենք 450 կովկասյան տնային ճնճղուկի բույն, ըստ որում Սևանի շրջանի կճափ գյուղում՝ 15 բույն, Աշտարակի շրջանի Ինակլու գյուղում՝ 12 բույն, մնացած 423 բները գտնվել են Արարատյան հարթավայրի գյուղերում և այգիներում:

Կովկասյան տնային ճնճղուկները բույն են շինում պատերի ճեղքերում, կտուրների տակ, ծառերի վրա, մասամբ զառիթափ տեղերում՝ գետնի մեջ (ճեղքերում, կրծողների հին բներում և այլն):

Տնային ճնճղուկի բույնը ծածկված տիպի է, ձվադրման տեղը մուտքից ցածր է կամ մի կողմ ծոված և շատ թե քիչ լայնացած: Բույնը հյուսվում է շոր խոտից, փալասի կտորներից, բրդից, բմբուլից, մազից և այլն:

Ծառի վրա տնային ճնճղուկի բները արտաքուստ նման են մի գունդ խոտի, դրանց արտաքին տրամագիծը տարբեր է (24—31 սմ), ուշադիր նայելիս մի կողքից նկատվում է քողարկված մուտքը, որը անհարթ, 3—4 սմ տրամագծով անցք է: Բնի հատակը ծածկված է բամբակով, փալասով կամ այլ փափուկ նյութերով:

Մեկ սեզոնում ճնճղուկի բազմացման երեք ցիկլ նկատվել է Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզում՝ 51 բներից երկուսում, Վերին Խաթունարխում՝ 36 բներից մեկում, Շահումյանի շրջանի Թազա գյուղում՝ 42 բներից մեկում և Նորքի այգիներում՝ 31 բներից մեկում: Նորքի այգիներում ձվադրումն ընթացել է հետևյալ ձևով. 1960 թ. առաջին բնադրումն սկսվեց մարտի սկզբին: Առաջին զույգ ճնճղուկներն սկսեցին բույն հաճախել և շինանյութ բերել դեռևս փետրվարի 24-ից, առանձնապես ժրաջան կերպով սկսեցին նյութ բերել մարտի 2-ին և 3-ին:

Վերոհիշյալ բնում առաջին ձուն դրվել է մարտի 5-ին, երկրորդ ձուն՝ մարտի 6-ին և այսպես օրական մեկ ձու ավելացավ մինչև մարտի 8-ը: Մարտի 9-ին ձու չի դրվել, իսկ հինգերորդ ձուն դրվել է մարտի 10-ին: Մարտի 8-ից էզր դրսում չէր երևում, իսկ մարտի 9-ին ժ. 19-ին ստուգումից պարզվեց, որ մայր ճնճղուկը գտնվում է բնում, այսինքն թխսավորվել է: Հաջորդ օրը էգին օղակավորեցինք:

Կովկասյան տնային ճնճղուկների ձուն բաց երկնագույն կամ կաթնամոխրագույն ֆոնի վրա ունի շագանակագույն բծեր, որոնք նոսրանում և փոքրանում են նեղ մասում: Զվերի միջին մեծությունը  $21 \times 15$  մմ է:

Ըստ Կելեյնիկովի [5], տնային ճնճղուկները թխսակալում են առաջին ձվից: Ըստ մեր դիտողությունների՝ Հայաստանի պայմաններում տնային ճնճղուկները թխսակալում են չորրորդ ձվից:

Մայր ճնճղուկը երբեմն շատ կարճ ժամանակով (2—4 րոպ.) դուրս է գալիս բնից, թռչում դեպի այգի: Երկու օր (մարտի 15-ին և 16-ին) անընդհատ հետևեցինք լուսաբացից մինչև մայրամուտ: Առաջին օրը բնից նա դուրս եկավ ժ. 9-ից անց 25 րոպե և բացակայեց մոտ 3 րոպե, երկրորդ անգամ՝ ժ. 16-ից անց 45 րոպե, բացակայեց 4 րոպե, երրորդ անգամ՝ ժ. 17-ից անց 25 րոպե և բացակայեց 2,5 րոպե, երրորդ օրը (մարտի 16-ին) բնից դուրս եկավ ժ. 10-ից անց 5 րոպե, բացակայեց 4 րոպե, երկրորդ անգամ՝ ժ. 15-ին, բացակայեց 2 րոպե, երրորդ անգամ՝ ժ. 18-ից անց 10 րոպե, բացակայեց 4 րոպե:

Արու ճնճղուկը օրական 4—5 անգամ մտնում էր բույնը և անմիջապես

դուրս գալիս, այդ նույն ժամանակ էգ ճնճղուկը բնումն էր լինում: Հավանաբար նա կերակրում էր թխսակալող էգին:

Մարտի 20-ին երևացին առաջին 3 ձագերը, 4-րդ ձագը դուրս եկավ լույս 21-ի գիշերը: Չվերից նոր դուրս եկած ձագերը լրիվ մերկ են ու վարդագույն:

Չագերը ձվից դուրս գալուց հետո թե՛ մայր և թե՛ արու ճնճղուկները ժրջան կերպով սնում են նրանց: Մարտի 24-ին առավոտյան մեկ ժամվա դիտողությունների ընթացքում գրանցվել է արու ճնճղուկի կողմից ձագերի կերակրման 13 թռիչք, իսկ մայր ճնճղուկի 10 թռիչք: Կերակրման այդ թափը շարունակվեց մինչև ժամի 14-ը, այնուհետև՝ ժ. 17-ից մինչև մթնաշաղ: Չագերը բնում մնացին մինչև ապրիլի 4-ը (իրենց կյանքի 15-րդ օրը), երբ ծնողները երևացին բնի մոտ, երկու ձագ իրենց դուրս նևտեցին բնից և տեղի ունեցավ առաջին թռիչքը, որը ավելի շուտ ցատկ էր, քան թռիչք: Բնից դուրս եկած ձագերն ընկան նրանից 5 մ հեռավորության վրա, խաղողի թփի տակ: Առաջին երկուսին հետևեցին 3-րդ և 4-րդ ձագերը: Ծնողները թռչում էին ձագերի շուրջը, բայց չէին կանգնում նրանց մոտ: Հաջորդ օրը, ինչպես և հետագա երկու օրերի ընթացքում, ձագերը երևում էին պարտեզում, ըստ որում ծնողները շարունակում էին նրանց խնամել, 4-րդ օրը ձագերը չերևացին: Բնից դուրս գալու 6-րդ օրը հարևան այգում, բնից մոտ 250 մ հեռավորության վրա նկատեցինք ձագերից երկուսին, որոնք թռչում էին բավական վարժ: Երկրորդ անգամ նույն զույգը նույն բույնն սկսեց վերանորոգել ապրիլի 21-ից, մինչև այդ զույգերը բնի մոտ չէին երևում, երբեմն միայն արուն էր կանգնում բնի մոտ: Առաջին ձուն բնում երևացել է ապրիլի 27-ին, իսկ վերջին ձուն դրվել է մայիսի 1-ին: Թուխս է նստել 30/4 մինչև 13/5: Չագերը դուրս եկան ընդամենը 3 ձվից, երկուսից ձագ դուրս չեկավ: Չագերի թռիչքը տեղի ունեցավ նրանց կյանքի 15-րդ օրը:

Երրորդ անգամ այդ զույգը նույն բնում ձվադրեց հուլիսի 2-ից, ընդամենը 7 ձու, որից 3-ը փշացել էր, իսկ 4 ձվից դուրս եկան ձագեր, որոնք բնից թռան օգոստոսի 3-ին: Հաջորդ գարնանը նույն բույնն զբաղեցրեց մի այլ զույգ:

Տնային ճնճղուկները բնադրման տվյալ տեղի հետ խիստ կապված են և միևնույն բնում կարող են 2—3 սեզոն ձու դնել: Մեր դիտողությունների ընթացքում 3 սեզոնից ավելի բնադրող ճնճղուկներ չեն նկատվել: Ընդհանրապես նկատվում է 2 սեզոն, 3 սեզոն միևնույն բնում ձվադրող հանդիպել է 4 զույգ: Կովկասյան տնային ճնճղուկները չեն քաշվում մարդկանց ներկայությամբ բույն հյուսելուց կամ ձագերին կերակրելուց, եթե տեղը բնադրման համար հարմար է: Այսպես, օրինակ՝ Երևանում Լենինի անվան հրապարակում արդյունաբերական ցուցահանդեսի պատի ճակատին հյուսվել են տնային ճնճղուկների բներ, շնայած այդ հրապարակը կարելի է համարել Երևանի ամենամարդաշատ տեղերից մեկը: Բազմիցս դիտվել է, թե ինչպես մայր ճնճղուկները մարդկանց ներկայությամբ սնվում և ձագերի համար կեր էին տանում բներից 20—30 մ հեռու գտնվող դեկորատիվ բույսերի ծաղիկներից ու տերևներից:

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, մեկ սեզոնում յուրաքանչյուր զույգ տնային ճնճղուկ տալիս է միջին հաշվով 8—9 ձագ, եթե չհաշվենք այն բացառիկ զույգերը, որոնք մեկ սեզոնում բազմանում են մեկ կամ երեք անգամ:

Կովկասյան տնային ճնճղուկների վերաբերյալ կատարել ենք նաև հաշվառում հասակային ու սեռային հարաբերակցության վերաբերյալ:

Տարբեր տարիների բազմաթիվ հաշվառումներից նշում ենք միայն մեկը, որը տիպիկ է բոլորի համար:

1962 թ. օգոստոսի 28-ին Շահումյանի շրջանի Թագազյուղի խաղողի այգիներում կազմակերպեցինք արտադրական պայքար, որից հետո այդտեղ

Աղյուսակ 4

Երևանի շրջակայքում կովկասյան տնային ճնճղուկների բազմացման պատկերը 1960 թ. ընթացքում (ըստ 30 բների)

Առաջին ձվադրում					Երկրորդ ձվադրում				
բների թանակը	խուրաբանչյուր բնում դրված ձվերի քանակը	զուրս եկած ճտերի քանակը	ճուտ դուրս չեկած ձվերի քանակը	զուրս եկած ճտերի միջին թանակը	բների թանակը	խուրաբանչյուր բնում դրված ձվերի քանակը	զուրս եկած ճտերի քանակը	ճուտ դուրս չեկած ձվերի քանակը	զուրս եկած ճտերի միջին թանակը
7	6	35	7		8	7	41	15	
8	5	35	5		6	6	31	5	
7	4	28	—	4	7	5	32	3	4,5
8	3	24	—		5	4	19	1	
					4	4	12	—	

300 մ ձգվող ճանապարհի մի հատվածում, ծառերի տակից հավաքեցինք 854 տնային ճնճղուկների դիակներ. դրանց մեջ կային ոչ նույն տարվա անհատներ՝ էգ 84, արու 62: 708 անհատների առաջին սերնդի մոտ արդեն լավ նկատվում էին սեռական դիմորֆիզմը, որոնցից էգ 388, արու 320:

Տնային ճնճղուկների երամները և նրանց տեղաշարժումները

Պարզելու համար, թե տնային ճնճղուկները բնից որքա՛ն հեռավորությամբ վրա կարող են թռչել կամ կեր փնտրելու գնալ, հեռացվել է մեր ուսումնասիրությանը ենթակա 450 բների ձագերի որևէ ոտքի մեկ մատի վերջին հատվածը: Ըստ որում տարբեր բնակավայրերում տարբեր մատների հատվածներ են կտրվել:

Պարզվել է, որ կովկասյան տնային ճնճղուկները տեղաշարժ կատարում են 1—3 կմ, երբեմն մինչև 5 կմ տարածության վրա: 1953 թ. մայիսին Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզում 250 օղակավորված ձագերից երկուսը որսացվել են հաջորդ տարվա հուլիսին Հոկտեմբերյանի շրջակայքում (4 կմ), իսկ մեկը՝ 4-րդ սովխոզում (3 կմ): 1954 թ. մայիսին էջմիածնի շրջանի Արշալույս գյուղում մատը կտրած 162 ճնճղուկներից նույն թվականի հոկտեմբերին 3 հատ որսացվել են Հայթաղում: Գիտողությունները ցույց են տվել, որ Արարատյան հարթավայրում տնային ճնճղուկները հաճախակի են մեկ բնակավայրից մյուսը տեղափոխվում, առանձնապես երիտասարդ ճնճղուկները, որոնք դեռևս չեն բնադրել: Այս հանգամանքը արժանի է հատուկ ուշադրության թե՛ տեսական և թե՛ գործնական առումով:

Տնային ճնճղուկի ձագերը բնից թռչելուց 6—10 օր հետո միանում են

այլ տնային ճնճղուկի ձագերի և կազմում երամներ: 15—20 օրական թռչող ձագերի հետ շատ քիչ են հանդիպում հասակավոր ճնճղուկներ:

Կովկասյան տնային ճնճղուկները Արարատյան հարթավայրում երամներ են կազմում սկսած մայիսի առաջին տասնօրյակից: Նրանք հիմնականում կերակրվում են 500—1000 մ հեռավորության վրա, հաշված իրենց գիշերելու տեղերից: առանձին դեպքերում նկատվել են 1—2 կմ-ի վրա թռչող երամներ: Երամներ կազմող ձագերը սնվելու նպատակով հետզհետե թռչում են ավելի երկար տարածություն և տարաբնակվում հարմար տեղերում:

Ամռանը ճնճղուկները, որտեղ էլ սնվելու լինեն, ունեն գիշերելու որոշակի տեղեր, որտեղ հավաքվում են մայրամուտին հսկայական խմբերով: Գիշերում են սովորաբար ծառերի վրա և իրենց աղմուկ-ձվձվոցով լցնում շրջակայքը: Տնային ճնճղուկներն ունեն և, այսպես կոչված, «փոշում լողանալու» (թավալվելու), մաքրվելու հատուկ տեղեր: Դրանք լինում են քիչ բանուկ ճանապարհների, կամ կանաչից ազատ տարածություններում, ուր օրվա որոշակի ժամերին մեծ խմբերով նրանք հավաքվում են այդպիսի տեղերում: Անհրաժեշտ է պայքարի ընթացքում նկատի ունենալ այս հանգամանքը և այն կազմակերպելուց առաջ գտնել և հենց այդ տեղերում էլ ցանել գրավչանյութը: Երամներում ճնճղուկների քանակը կրկնապատկվում է հուլիսի առաջին և երկրորդ կեսերին. երբ թռչում են երկրորդ սերնդի ձագերը, նրանք սկզբում առանձին են լինում, հետո միանում, կազմում են խոշոր երամներ: Բոլոր դեպքերում ծնողները խուսափում են ձագերի հետ երամ կազմելուց: Վտանգի դեպքում հասակավոր ճնճղուկները անընդհատ մոտենում և հեռանում են ձագերից տարբեր կողմեր, նրանց «հասկացնելով», որ անհրաժեշտ է ցրվել: Ընդհանրապես տնային ճնճղուկները խորամանկ և «խելոք» թռչուններ են, այդ մասին հիշատակված է դեռևս վաղուց (Խալատկովսկի և Սիլանտև—[9], Նեստերով—[7] և ուրիշ.):

Տնային ճնճղուկների երամները պահպանվում են մինչև հաջորդ գարուն: Ուշ աշնանը և ձմռանը ճնճղուկները, երամներ կազմելուց հետո, գլխավորապես գիշերում են ծառերի վրա, տանիքների տակ: Գյուղերում նրանք գիշերում են, հիմնականում, գոմերի կտուրների տակ (ուր համեմատաբար տաք է), բոլոր գյուղերում մեծ քանակությամբ նկատվել են խոտի և հարգի դեղերի մեջ (հատկապես ձմռանը), իսկ Երևանում մեծ մասամբ կենտրոնանում են էլեկտրաղացի և հացահատիկի պահեստների, խտացրած անասնակերերի գործարանի և մանավանդ թռչնաբուծական ֆաբրիկայի շենքերի ու հարևան շենքերի կտուրների տակ:

Քաղաքում, հատկապես բակերում, կերի մնացորդներ շատ լինելու պատճառով, ձմռանը տեղի է ունենում խոշոր կուտակումներ, առաջացնելով, այսպես կոչված, «ճնճղուկային ակումբներ»: Այդպիսի «ակումբներ» Երևանում հանրահայտ են Լենինի պողոտայում, 26 կոմիսարների այգում, Աբովյան և այլ փողոցներում: Ճնճղուկները հազարներով կուտակվելով ծառերի վրա, ձվձվոցով «լցնում» են շրջակայքը, ծերտով ապականում փողոցներն ու քաղաքացիների վերնազգեստը, էլ շենք խոսում նրանց հակաառողջապահական նշանակության մասին:

Դիտողություններից պարզվել է, որ փողոցի վրայի խոշոր շենքերի կտուրների տակ և առանձնապես այդ շենքերի հետևում գտնվող մանր տների պատերի ճեղքերում կան մեծ քանակությամբ տնային ճնճղուկների բներ:

Պետք է նշել, որ տնային ճնճղուկների մոտ բավական ուժեղ է բնային կոնսերվատիզմը: Հիմնականում այդ շրջակայքում բնադրող ճնճղուկներն էլ նույն տարվա ձագերի և այլ տեղերից եկած ճնճղուկների հետ հավաքվելով, կազմում են հսկայական երամներ:

Երևանի պետական համալսարանի

Կենսաբանական ֆակուլտետ

Ստացվել է 30. XI. 1962

Г. Г. МАНУЧАРЯН

## БИОЛОГИЯ КАВКАЗСКОГО ДОМОВОГО ВОРОБЬЯ

### Резюме

Кавказские домовые воробьи в Араратской долине начинают размножаться с начала марта до августа и дают два массовых поколения, но случаются в виде исключений и 1 или 3 поколения. Первое массовое поколение развивается в марте — мае месяцах, второе — в основном в июне—июле, но иногда может затянуться и до половины августа.

Высиживают яйца только самки в течение 12 дней. Птицы вылетают из гнезд на 14-й—15-й день.

В течение одного сезона одна пара домовых воробьев дает 8—9 птенцов. Кавказские домовые воробьи—моногамные птицы. У домовых воробьев довольно сильно выражается гнездовой консерватизм.

Стаи кавказских домовых воробьев организовываются начиная с первой половины мая и удваиваются к концу июля и сохраняются до следующего весеннего отбора пар. Стаи в Араратской равнине перемещаются на 1—3 км, а в некоторых случаях отмечено перемещение на 5 км.

### Գ Ր Ա Շ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ե

1. Даль С. К. Материалы по вертикальному распределению пресмыкающихся, птиц и млекопитающих в долине реки Занги и Мисханы. Изд. АН АрмССР, Ереван, 1948.
2. Даль С. К. Животный мир АрмССР. Изд. АН АрмССР, Ереван, 1954.
3. Дементьев Г. П. Всероссийское общество охраны природы. Москва, 1949.
4. Ильенко А. И. Зоологич. журнал, т. XXXVIII, вып. 7, 1949.
5. Келейников А. А. Экология домового и полевого воробьев как массовых вредителей зерновых культур в южных районах СССР. Москва, 1953.
6. Манучарян Г. Г. Изд. Ереванского Госунта, т. 38 (серия биологических наук, выпуск 3), Ереван, 1953.
7. Нестеров П. В. Орнитологический вестник, 1, 1911.
8. Портенко Л. А. Птицы СССР, Изд. АН СССР, 1960.
9. Холодковский Н. А., Силантьев А. А. Птицы Европы. Практическая орнитология с атласом европейских птиц. С-Петербург, 1901.